

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև մամուլի և տեղեկատվության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, ոգեշնչված իրենց երկրների և ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման ընդհանուր ցանկությամբ, կարևոր նշանակություն տալով երկու երկրների միջև մամուլի և տեղեկատվության բնագավառում համագործակցության զարգացմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը նորությունների գործակալությունների միջոցով աջակցություն կցուցաբերեն տպագրական, լսատեսողական և զանգվածային լրատվական այլ միջոցներով քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում իրենց պետությունների գործունեությանը վերաբերող նորությունների պարբերական փոխանակման իրականացմանը:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն երկու երկրների տեղեկատվական հիմնարկների, մամուլի և տեղեկատվության մարմինների, գրահրատարակչական և տպագրական բնագավառի ձեռնարկությունների, տպագրական հրատարակություններ տարածողների միջև համագործակցությանը հետևյալ ոլորտներում.

փոխադարձության հիմունքների վրա Կողմերի պետությունների տարածքներում թղթակցային կետերի բացում,

տեղեկատվական նյութերի, զանգվածային լրատվությանը, տպագրությանը և գրահրատարակչությանը վերաբերող տեղեկատվական թերթիկների փոխանակում, այդ թվում նաև նյութատեխնիկական ապահովման բնագավառում,

զանգվածային լրատվական միջոցների, գրահրատարակչության և տպագրության, մամուլի տարածման բնագավառում պատվիրակությունների, փորձագետների, մասնագետների փոխանակում,

մասնագետների նախապատրաստման և ստաժավորման ոլորտում փորձի փոխանակում,

գրքի և մանուկի միջազգային ցուցահանդեսներին, սեմինարներին, կոնֆերանսներին մասնակցություն:

Հոդված 3

Կողմերը իրենց տեղեկատվական հիմնարկների օգնությամբ կիրատարակեն և կցուցադրեն յուրաքանչյուր երկրի ազգային տոները լուսաբանող նյութեր և ծրագրեր: Այս հիմնարկները կփոխանակեն նշված նպատակների համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերը:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրը անհրաժեշտ օգնություն կցուցաբերի մի Կողմի պետության տարածքում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար մյուս Կողմի տեղեկատվական հիմնարկների կողմից գործուղված լրագրողներին, լուսանկարիչներին, հեռուստատեսային և հրատարակչական խմբերին, ինչպես նաև այլ մասնագետներին՝ նրանց կողմից այն Կողմի պետության օրենսդրության պահպանման պայմանով, որի տարածք նրանք գործուղված են:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի ամբողջ գործունեությունը կիրականացվի ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան:

Հոդված 6

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, համապատասխան արձանագրություն ստորագրելու ճանապարհով սույն Համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Այդ արձանագրությունը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին ծանուցագրերի փոխանակման օրվանից:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածի համար, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ գրավոր կարգով մյուս Կողմին չժամուցի դրա գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 2000 թվականի հոկտեմբերի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 29-ից: